աջին անգամ ձեռնամուխ է լինում բրոշյուրների սերիայի հրատարակման, որը վերաբերում է հնության հուշարձաններին և նրանց արձանագրություններին։

Ավանի հուշարձանի վերաբերյալ նյութեր արդեն հրատարակվել են Կ. Ղաֆադարյանի (ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից Հայ Եկեղեցու Գործերի Սովետի անդամ) բրոշյուրում, որը կոչվում է «Ավանի երկլեզվյան կրիպտոգրաֆիկ արձանագրությունը»։ Հ. Ջանփոլադյանը տպագրության համար պատրաստել է նյութեր Ղոշավանքի մասին։ Լույս տեսած և տպագրության համար պատրաստվող բրոշյուրներում տրվում են պատմական ակնարկ, ճարտարապետական չափումներ և արձանագրություններ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության որոշմամբ, զգալիորեն ընդարձակվում են Պետական պատմական թանգարանի ազգագրական բաժնի աշխատանքները։

Ազգագրական տեղեկություններ և նյութեր հավաքելու համար պրոֆեսոր Լիսիցյանը կազմել է ազգագրական տեղեկությունների նկարագրության վերաբերյալ ընդարձակ հարցաթերթ, որով տեղերում պետք է օգտվեն ուսումնասիրողները։

1946 թվին թանգարանում կկազմակերպվի մշտական ազգագրական ցուցահանդես։

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԼԱՈՒՐԵԱՏՆԵՐԸ

1943—1944 թ. թ. գիտական նշանավոր աշխատությունների, գյուտարարությունների, արտադրական աշխատանքի մեթոդների արմատական կատարելագործումների և արվեստի ու գրականության ասպարեզի լավագույն երկերի համար ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի 1946 թվի հունվարի 26-ի որոշումներով Ստալինյան մրցանակներ են շնորհված մեր երկրի գիտնականներին, արտադրության նորարարներին, կոլխոզնիկներին, գրողներին, պոետներին և արվեստի աշխատողներին։

Իրենց աշխատություններով սովետական գիտությունը և կուլտուրան հարստացրած Ստալինյան մրցանակի լաուրեատների նշանավոր անունների թվում նշված են նաև հայ ժողովրդի պանծալի զավակները և Հայկական ՍՍՌ գիտության, գրականության ու արվեստի ներկայացուցիչները։

Մաղկում ու փթթում են գիտությունը և արվեստը ՍՍՌՄ-ում և նրա անբաժան մասը կազմող Սովետական Հայաստանում։

Գերմանական հրոսակների ավազակային արշավանքները չկարողացան դադարեցնել սովետական մարդկանց ստեղծագործ աշխատանքը. ընդհակառակը սովետական գիտնականները և արվեստագետները ոգեշնչված Հայրենական Մեծ պատերազմի բարձր և վեհ գաղափարներով իրականացրին իրենց ուժերը և օգնեցին Հայրենիքի ռազմական հզորության ամրապնդմանը՝ չխնայելով գիտության ու կուլտուրայի զարգացման համար։ Այդ մասին են վկայում Ստալինյան մրցանակների շնորհումը գիտության, տեխնիկայի, արվեստի ու գրականության գործիչներին։

Ստալինյան մրցանակներ շնորհելը սահմանվել է 1939 թվի դեկտեմբերի 20-ին՝ պատիվ Ի. Վ. Ստալինի ծննդյան 60-ամյակի և մինչ այժմ շնորհվել է չորս անգամ։ Մրցանակների առաջին շնորհումը տեղի է ունեցել 1941 թ. մարտին, իսկ երկրորդը և երրորդը՝ Հայրենական պատերազմի տարիներին 1942 և 1943 թ.։ Ստալինյան մրցանակի լաուրեատի պատվավոր կոչում է շնորհված արդեն գիտության ու տեխնիկայի 1686 և արվեստի ու գրականության 502 գործիչների. դրանցից 21 հոգի երրորդ, իսկ 4 հոգի չորրորդ անգամն են արժանացել մրցանակի։ Չորրորդ անգամ մրցանակների շնորհման ժամանակ, որը տեղի ունեցավ 1946 թվին, լաուրեատի կոչում տրվեց գիտության ու տեխնիկայի 624 և արվեստի ու գրականության 155 գործիչների, դրանց թվում մի շարք հայ գիտնականների ու արվեստագետների։ Հայ գիտնականներին և արվեստագետներին Ստալինյան մրցանակի լաուրեատի բարձր կոչում շնորհելը հպարտության ու հրճվանքի զգացումով է լցնում ամեն մի հայրենասեր հայի սիրտը, որովհետև նա վկայում է հայ մշակույթի, հայկական կուլտուրայի աննախընթաց վերելքի մասին։

Ստալինյան մրցանակի լաուրեատի կոչում է շնորհված ակադեմիկոս Ս. Մալխասյանին. իր հոյակապ հայագիտական աշխատության համար։

Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանին երրորդ անգամն է շնորհվում Ստալինյան մրցանակ. տաղանդավոր կոմպոզիտորի անունը հայտնի է նաև Միության սահմաններից դուրս ամբողջ երաժշտական աշխարհում։ Անվանի երաժշտագետ Սովետական Հայաստանի 25-ամյա տոնակատարության կապակցությամբ Երևան այցելած ժամանակ, եղավ նաև Էջմիածնում և գրություն ունեցավ Վեհափառ Հայրապետի հետ։ Իր երաժշտական երկերում հայ եկեղեցա-

կան երաժշտության տարրերի օգտագործման խնդիրների շուրջ։ Ստալինյան մրցանակ է շնորհվել նաև մեր ականավոր երաժշտագետ հայր Կոմիտասի անունը կրող կվարտետին։ Կոմիտասի անվան կվարտետը ողջ Միության մեջ երկրորդ կվարտետն է, որ արժանանում է Ստալինյան մրցանակի լաուրեատի բարձր կոչմանը։ Այս բոլորը հայկական երաժշտական կուլտուրայի, երաժշտական ստեղծագործ կադրերի աճի ցուցանիշ է հանդիսանում։

Կոմիտասի անվան կվարտետը (ձախից-աջ) Ա. Գաբրիելյան, Ն. Բալաբանյան, Ս. Ասլամազյան, Մ. Տերյան

Ստորև տալիս ենք 1946 թվին Ստալինյան մրցանակի լաուրեատի կոչում շնորհված հայ ժողովրդի զավակների անունները։

Ստալինյան մրցանակներ են շնորհված.

Հրչիկոս-մաթեմատիկական գիտությունների ասպարեզում գիտական նշանավոր աշխատությունների համար երկրորդ աստիճանի մրցանակ է շնորհված, 100 հազար ռուբլու չափով՝

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱՍԱՍՊԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ՝ *Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Լենինգրադի Պետական համալսարանի պրոֆեսոր,— պլազմոր միջավայրում լույսի տարածման նոր տեսություն ստեղծելու համար, որը շարադրված է 1942—1944 թվերին հրապարակված «Պլազմոր միջավայրում լույսի տարածման հաշվարկման նոր եղանակ», «Մոլորակների մթնոլորտների միջոցով լույսի տարածման մասին», «Պլազմոր միջավայրի միջոցով լույսի դիֆուզային արտացոլման հարցի շուրջը» աշխատություններում։*

Պատմա-ֆիլոլոգիական գիտությունների ասպարեզում գիտական նշանավոր աշխատությունների համար առաջին աստիճանի մրցանակ է շնորհված 200 հազար ռուբլու չափով՝

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԳՍԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ՝ *Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ,— 1944 թվին հրապարակված «Հայ լեզվի բացատրական բառարան» կապիտալ աշխատության համար։*

Նշանավոր գյուտարարությունների և արտադրական աշխատանքի մեթոդների արմատական կատարելագործումների համար Ստալինյան մրցանակներ են շնորհված։

Առաջին աստիճանի մրցանակ 150 հազար ռուբլու չափով՝

ՀԱՄՈ ՍԵՐԳԵՅԻ ՅՈԼՅԱՆԻՆ՝ *սոցիալիստական աշխատանքի հերոս, Ի. Վ. Ստալինի անվան գործարանի դիրեկտոր,—տեխ-*